«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Հետազոտության թեման՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ*

*Առարկան՝ Դասվար*

*Հետազոտող ուսուցիչ՝ Դոնարա Մանասյան*

*Ուսումնական հաստատություն՝ Եղնիկի հիմնական դպրոց*

**Երևան 2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ... 2

ԳԼՈՒԽ 1-ԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ... 3

ԳԼՈՒԽ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ ... 5

2.1 Հետազոտական մաս ... 6

2.2 Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն ... 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ... 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ... 17

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության արդիականությունը.** Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց հարկավոր են մշակել և իրագործել նոր ուսուցման մեթոդներ: Թեման արդիական է քանի որ, համագործակցության վրա հիմնված ուսուցումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է: Խմբերի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, առարկային առնչվող նյութեր յուրացնելուց բացի նրանք ձեռք են բերում նաև շփման հմտություններ: Սույն աշխատանքով ցանկանում ենք անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային միջոցների կիրառման արդյունավետությանը և որքանո՞վ է առաջադրված փորձը նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը:

**Հետազոտման նպատակը, խնդիրները և մեթոդները.** Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել համագործակցային ուսուցումը, որքանով է այն արդյունավետ: Հետազոտության ընթացքում մենք կիրառել ենք դերային խաղի, խմբային աշխատանքների մեթոդները մայրենի առարկայի դասընթացի ժամանակ:

**Խնդիրները.** աշխատանքի նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ի՞նչով է արդյունավետ համագործակցային ուսուցումը:
2. Զարգացնում է արդյո՞ք ճանաչողական հմտությունները:
3. Ինչի՞ն է միտված համագործակցային ուսուցումը:

**Հետազոտության առարկան.** Սույն հետազոտական աշխատանքի հետազոտության առարկան համագործակցային ուսուցումն է և դրա կիրառումը մայրենիի դասերին: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավվում են ուսուցման մեջ: Մեր

նպատակն է ներկայացնել համագործակցային ուսուցման առավելությունները և դրա կարևորությունը ուսուցման գործընթացում:

**Հետազոտության գիտական նորույթը.** Սույն աշխատանքի գիտական նորույթն է հանդիսանում այն, որ մենք ներկայացրել ենք նոր ուսուցման մեթոդ այն է համագործակցային ուսուցումը: Մանրամասնորեն ներկայացնելով ուսուցման կարևորությունը, նոր գիտելիքներ ստանալու ,ամրապնդելու կարևորության մասին:

## ԳԼՈՒԽ 1-ԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համագործակցային ուսուցումը ներկայումս ունի լայն տարածվածություն: Այն սկսելի է ավելի կիրառելի դառնալ: Ուսուցման տվյալ տեսակը ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը համարվում է խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն, որն իրենից ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն հնարավորություններ է ընձեռում բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար: Ուսուցման այս տեսակը հնարավորություն է ստեղծում սովորողների մոտ ձևավորել միջանձնային հմտություններ, զարգացնել դրանք: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հայաստանի դպրոցներն ու ուսուցիչները այսօր առնչվում են միանման խոչընդոտների: Դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումները:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս [1, էջ 336-345]: Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Հետաքրքրական է այն հարցը, հնարավո՞ր է համագործակցային ուսուցման տարրերի և միջոցների կիրառելիության միջոցով աշակերտների մոտ զարգացնել դրական փոխկապակցվածություն, անձնական պատասխանատվություն, դեմ առ դեմ փոխազդեցություն, խմբային համագործակցության գաղափարներ, [2]:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավվում են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները

միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար» [3, էջ 18]: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից:

Ըստ Կագանի կառուցվածքային (համագործակցային ուսուցումը) շատ տարբերվում է ուսուցման այլ ձևերից: Կառուցվածքներով մենք կառուցում ենք փորձառություններ, քանի որ ուսանողներն առաջին հերթին սովորում են իրենց սեփական փորձից, ոչ թե ուսուցչի ասածից: Կառուցվածքները կազմակերպում են ուսանողների փոխազդեցությունը միմյանց հետ, ուսուցչի և առարկայի հետ այն ձևերով, որոնք տալիս են դրական արդյունքների լայն շրջանակ: Համագործակցային ուսուցումը դասավանդման ընդհանուր տերմին է, որտեղ ուսանողները համագործակցում են որոշակի սկզբունքների համաձայն `սովորելու նպատակով: Սովորաբար այն տեղի է ունենում թիմերում, և այդ թիմերում համագործակցության տարբեր կանոններ նպատակ ունեն ապահովել ուսումնական աշխատանքներում օպտիմալ սիներգիայի էֆեկտ: Համագործակցային ուսուցման կարևոր տարրը սոցիալական հմտությունների զարգացումն է *[6, էջ 5]:*

## ԳԼՈՒԽ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

Գիտության և տեխնիկայի զարգացումն իր հետ բերել է մինչ այդ հայտնի գիտությունների տարաբաժանման կամ տարբերակման

պահանջ. Մայր գիտություններից բաժանվեցին ու զարգացման ինքնուրույն ճանապարհ բռնեցին բազմաթիվ նոր գիտություններ: Գիտությունների այդ տարաբաժանումը շարունակվում է մինչև օրս, որովհետև դա պայմանավորված է կյանքի ու գիտության հետագա առաջընթացով, որը երբ կանգ չի առնում մեկ կետի վրա: Հայոց լեզվի ուսուցանումը, ունի իր մեթոդները: Լեզվի մեթոդիկան պատկանում է մանկավարժական գիտությունների շարքին, նրա ուսումնասիրության առարկան լեզվի ուսուցումն է [5, էջ 9]:

Իսկ արդեն հայոց լեզվի ուսուցումը իր հերթին բաժանվում է մասերի: Մայրենի լեզվի տարրական դասընթացը բաժանվում է երկու բաժինների՝ լեզվական նախագիտելիքներ և լեզվական տարրական գիտելիքներ [3, էջ 300-307]: Խոսքի զարգացումը կրթադաստիարակչական մեծ նշանակություն ունի աշակերտի համար: Լեզուն, մարդկային հաղորդակցման միջոց լինելով հանդերձ, միաժամանակ մտածողության միջոց է: Այստեղից բխում է, որ աշակերտի մտքերը ճիշտ ձևով արտահայտելու, հստակ ձևակերպելու անհրաժեշտությունը ըստ էության միտքը ճիշտ կառուցելու, ճիշտ և հստակ մտածելու պահանջ է: Նշանակում է՝ խոսքի զարգացումն իր շատ կողմերով նպաստում է աշակերտի տրամաբանական մտածողության զարգացմանը [2, էջ 300-304]:

Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա ագործունեության հետ:

## 2.1 Հետազոտական մաս

Այժմ մենք կներկայացնենք համագործակցային ուսուցման կիրառման օրինակ մայրենիի դասընթացի ժամանակ:

**Առարկա -** Մայրենի

**Դասարան** - երրորդ

**Աշակերտների քանակ** - 10

**Տևողություն** - 45 րոպե

**Դասի տիպը-** խառը

**Օգտագործվող մեթոդներ**-*«Հնգյակի մեթոդ», «Շարադրություն 10 րոպեում», «Երկու աստղիկ, մեկ դրոշակ», «Պրիզմա», «Մտագրոհ»*

**Դասի թեման -** *«Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց» Հ. Շիրազ*

Դասի նպատակները՝

**Ակադեմիական -** Ստուգել, թե որքանով են յուրացրել տրված գիտելիքները և կարողացե՞լ են ժամանակակից տեղեկատվական միջոցներից օգտվել ու տեղեկություն քաղել թեմայի վերաբերյալ (տեղեկություն Մաշտոցի կյանքի, գործունեության, ստեղծագործական ուղու մասին):

**Հմտությունների զարգացման** -Աշակերտների մոտ ձևավորել առաջադրանքը համագործակցելով կատարելու հմտություններ: Ցույց տալ խմբային աշխատանքի առավելությունները: Կարողանալ գնահատել իր և ընկերոջ աշխատանքը: Կարողանալ խոսել հայեցի, կիրթ, մտքերն արտահայտել դիպուկ:

**Արժեքային համակարգը-** Կկարողանան ըստ արժանվույն գնահատել հայոց տառերի տեղն ու դերը մեր պատմության մեջ:

**Դաստիարակչական –** Կտոգորվեն հայրենասիրության բուռն զգացումով, ուսման հանդեպ սիրով ու ձգտմամբ, համեմատականներ կանցկացնեն և արժանի ձևով կգնահատեն իրենց արդեն ծանոթ մեր անզուգական Մեծերի տեղն ու դերը հայ երիսգոյության պայքարի ճանապարհին: Կսովորեն միմյանց հանդեպ օգտակար լինել:

**Դասարանի կահավորումը-**Յուրաքանչյուր խումբ պետք է նստի մեկ սեղանի շուրջ, որի վրա պետք է լինեն անհրաժեշտ

բոլոր պիտույքները: Գրատախտակից կախված կլինի Մեսրոպ Մաշտոցի նկարը, հայերենի սեղնագործ տառերը, տառանուններով այբուբենը, մեծադիր աղյուսակ, որտեղ լուսաբանվում է տառերի թվային նշանակումը:

**Հաջողության չափանիշները –** Խմբի բոլոր անդամները պետք է կարողանան բացատրել իրենց թեման և պատասխանել իրենց ուղղված հարցերին:

**Վերահսկում, միջամտում–** Անընդհատ մոտենալ խմբերին, հետևել նրանց աշխատանքին և պատասխանել այն հարցերին, որոնք առաջացել են խմբի անդամների մոտ:

**Առաջադրանքների ներկայացում**-Առաջադրանքների պատասխանները ներկայացվում են խմբի անդամների կողմից, իսկ պաստառը կախում գրատախտակից: Խմբի կամայական անդամ պետք է ներկայացնի այն:

**Գնահատումը–** Խմբի յուրաքանչյուր անդամի գնահատում են խմբի անդամները, իսկ խմբին՝ դիտորդները: Դասին առավել ակտիվ աշակերտները ներկայացվում են խրախուսանքի և գնահատվում են դասամատյանում:

Առաջին խմբին հանձնարարվում է չափածո բանաստեղծությունը ներկայացնել արձակ ձևով: Օգտվելով **«2 աստղիկ և 1 դրոշակ»** մեթոդից՝ ներկայացնել վերջինիս 3 կետերի շուրջ իրենց կարծիքը:

Երկրորդ խմբին հանձնարարվում է **«Պրիզմա»** մեթոդով աշխատել **«Այբուբեն»** և **«Հաղթանակ»** բառերի շուրջ, նաև առաջարկել մյուս խմբերին , որ օգտվեն թվերը հայերենի այբուբենի տառերով նշանակելու պաստառից և լուծեն առաջարկված պարզ խնդիրները, նաև կասեն ջերմ բառեր ու կպահանջեն դրանք գրել տառանունների միջոցով, համեմատականներ կանցկացնեն: Երրորդ խմբին հանձնարարվում է օգտվել տանը պատրաստած տեղեկություններից և լրացնել **«ԳՈւՄ»** աղյուսակը հայկական գրի ու դպրության մասին, Մաշտոցի գործունեության ժամանակաշրջանի մասին: Յուրաքանչյուր

խումբ տրամադրված ժամանակի լրանալուց հետո կներկայացնի իր աշխատանքը, մյուսները կանեն լրացումներ: Այսքանն անելուց հետո կերգեն **«Հայոց տառեր»** երգը: Վերջում 3 խմբին էլ կհանձնարարվի օգտվել **«10 րոպեանոց շարադրություն»** կամ **«Հնգյակ»** մեթոդներից և ամփոփել օրվա դասը: Վերջում կկատարվի գնահատում և կհանձնարարվի տանը գրել փոքրիկ շարադրություն՝ **«Իսկ ինչ կանեմ ես իմ հայրենիքի համար»** վերնագրով:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությանը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ: Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են: Խիստ կարևոր է տարբերակել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումից: Մեզանից շատերը դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները կիրառելու համար անհրաժեշտ վարպետություն, ուստի համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցումը:

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես

գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ:

Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

**Համագործակցային ուսուցման տարրերը**

- դրական փոխկապվածության ապահովում.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթացի մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում:
- Համագործակցային տեխնոլոգիայում կիրառվող մեթոդները և հնարները
- Թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Պատկերասրահում
- Խմբային հետազոտություն

Համագործակցային ուսումը կարելի է իրականացնել նաև հետևյալ թեմայի դասավանդման ընթացքում, ներգրավելով դասարանի բոլոր աշակերտներին:

**Դասի պլան**

Դասարան՝ 3-րդ

**Դասի տիպը՝** ամրակայման դաս, համագործակցային ուսուցում

**Դասի թեման՝** ***«Հայկը և Բելը»:*** Գոյականի ձևափոխությունները խոսքում Դասի նպատակները՝ Կարդալու կարողությունների զարգացում, խմբային աշխատանքի կատարում

**Դերային խաղ՝** Ամրակայել երկխոսությունները դերերով կարդալու կարողությունները:

**Զարգացնել նկարագրական խոսք կառուցելու կարողությունները՝** բնագրից ընտրելով և կարդալով այն բառերն ու արտահայտությունները, որոնցով հեղինակը նկարագրում կամ բնութագրում է հերոսներին:

**Լեզվական կարողություններ՝** Կսովորեն նախադասությունների մեջ տեղադրել գոյականը՝ համապատասխան ձևափոխություններով: Կամրապնդեն հականիշ բառերի մասին ունեցած գիտելիքները: Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

ա) առաջադրանքի սահմանումը,

բ) տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,

գ) տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը (որտեղ),

դ) տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,

ե) սինթեզը

**Ցուցադրական նյութեր՝** «Հոմանիշներ-հականիշներ» ցուցապաստառ, քարտային առաջադրանքներ, սահիկահանդես, համակարգիչ, հերոսների նկարներով պաստառ:

**Դասի ընթացքը՝** Խթանման փուլ՝ կազմակերպչական պահ (այբուբենի արտասանություն և տնային հանձնարարության պարզաբանում): Մտագրոհի մեթոդով աշակերտները կներկայացնեն, թե ովքե՛ր են հերոս համարվում և ովքե՛ր են հայրենիքի մի զարկը:

Արևի շողերին կլրացնեն Հայկ Նահապետ, Սասունցի Դավիթ, Զորավար Անդրանիկ, Մեսրոպ Մաշտոց, Մխիթար Հերացի, Կոմիտաս, Գարեգին Նժդեհ, Վիկտոր Համբարձումյան և այլն:



Իմաստի ընկալման փուլ՝ կկարդան «Հայկը և Բելը» բնագիրը նախ միմյանց շարունակելով, ապա՝ ընտրովի և դերերով:

Ընտրովի ընթերցանության համար նախատեսված հարցեր.

**1. Ո՞վ էր Հայկը և ինչու՞ հեռացավ Բելից:**

**2. Ո՞վ էր Բելը և ինչու՞ հարձակվեց հայկի երկրի վրա:**

**3. Կարդալ Հայկին և Բելին բնութագրող տողերը:**

**4. Կարդալ Հայկի և Բելի կռիվը նկարագրող հատվածը:**

Համագործակցային ուսուցման կարևորագույն մաս է կազմում համագործակցային քննարկումը: Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման

ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):

1. Բնագրից դուրս գրել անձ ցույց տվող 5 գոյական և գործածել նախադասություններում:

2. Բնագրից դուրս գրել հոգնակի թվով գործածված գոյականները և դարձնել եզակի:

3. Բնագրից դուրս գրել հականիշ բառազույգերը:

Կարևոր է նաև աղյուսակների և դիագրամների կառուցումը, լրացումը:

Այս T-աձև աղյուսակով աշակերտները կբնութագրեն Հայկին և Բելին: Խմբի մի մասը կներկայացնի Բելին իսկ մյուսը Բելին:

| Հայկ | Բել |
|---|---|
| քաջ | հսկա |
| հսկա | վախկոտ |
| կորովաձիգ | բռնակալ |
| հպարտ | գոռոզ |
| համարձակ | ամբարտավան |
| հայրենասեր | մեծամիտ |
| ազնիվ | դաժան |
| ուժեղ | ինքնահավան |

**Ստեղծագործական աշխատանք՝** Կհամեմատեն «Հայկի և Բելի մենամարտը» «Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի մենամարտի»



հետ։



Կշռադատման փուլ՝ Անդրադարձ կատարել դասանյութին, ամփոփել հարցերի միջոցով և «Քառաբաժան» մեթոդով։

| Ի՞նչ տեսա։ | Ի՞նչ լսեցի։ |
|---|---|
| Ի՞նչ զգացի։ | Ի՞նչ սովորեցի և իմացա։ |

**Գնահատել**՝ պատճառաբանելով՝ ըստ կատարած աշխատանքների։

## 2.2 Հետազոտության արդյունքների մշակում և վերլուծություն

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները։ Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն

հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը: Դերախաղը ևս համարվում է ուսուցման եղանակ: Ստեղծագործական դերախաղը գիտելիքն անձնավորելու փորձ է: Որպես հիմնական հասկացություններ հանդես են գալիս դերը և նույնացումը: Դա նշանակում է, որ աշակերտները դեր են խաղում՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեին տվյալ դերում կամ իրավիճակում հայտնվելու դեպքում: Կախված առաջադրանքից՝ նրանք կարող են մարմնավորել հենց իրենց՝ որոշակի իրավիճակում, կամ էլ որոշակի բնութագիր ունեցող: Բայց նույնիսկ վերջին դեպքում աշակերտի անձը փոխազդեցության մեջ է մտնում իր կողմից մարմնավորվող կերպարի հետ: Ահա թե ինչպես, իդեալական դեպքում, նրանք կարող են հասկանալ խնդիրը սեփական փորձառության միջոցով:

Դերախաղի, ինչպես նաև գործնական աշխատանքի վրա հիմնված մեթոդի դեպքում հարց է ծագում՝ արդյոք այն պետք է նախորդի, թե՞ հաջորդի ուսուցչի կողմից նոր թեմայի ներկայացմանը: Համաձայն ավանդական տեսակետի, դերախաղը խաղ է, որը պետք է անցկացնել միայն լուրջ աշխատանքն ավարտելուց հետո. ավելին, անհնար է որևէ բան ներկայացնել, երբ աշակերտները դեռևս չեն յուրացրել տվյալ նյութի փաստերը: Հաճախ աշակերտների համար դերախաղը դառնում է անհետաքրքիր, երբ արդեն հայտնի է, թե նրանք ինչպես պետք է գործեն: Մինչդեռ, եթե աշակերտները որոշակի իրավիճակ են ներկայացնում, նրանք կարող են իրենց անձնական փորձը համադրել ներկայացվող գիտելիքին հաջորդիվ: Այսպես մեր ներկայացրած դասի պլանով աշակերտները ներկայացնում են թեման: Ընտրվում են պատահականության գկզբունքով երկու աշակերտ որոնցից մեկը կատարում է Հյակի իսկ մյուսը Բելի դերը: Այսպես նաև զարգանում է նրանց խոսքի կարողունակությունը, և լսարանին վստահ ներկայանալու կարողությունը: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական

իմաստն այն է, որ աշակերտի կարողությունները օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց:

Համագործակցային ուսուցումը իրականացնելիս կարևոր է առաջնորդվել Կագանի մեթոդներով: Այս գիրքը համագործակցային ուսուցման եղանակների ամենալիարժեք և ամենաարդի ժողովածուն է: Այն չի առնչվում որևէ այլ մեթոդի. դրանում ներկայացված մեթոդը հայտնի է որպես Կագանի մեթոդ: Այն մեթոդներից կազմված ժողովածու է, որոնք տեսակավորված են հիմնականում ըստ աշակերտների կարողությունների: Կագանի մեթոդի հիմքում դրված է համագործակցության գաղափարը, և այդ մեթոդով փորձ է կատարվում հաշվի առնել անհատական յուրահատկությունները: Կագանի մեթոդով տվյալ առարկայի նպատակն է հանդիսանում դասավանդվող նյութի հիման վրա ճանաչողական հմտությունների զարգացումը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքի ավարտին հանգել ենք հետևյալ եզրակացություններին`

1. Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավվում են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները:

2. Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ: Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով:
3. Համագործակցության վրա հիմնված ուսուցումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է: Խմբերի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, ուստի զուտ առարկային առնչվող նյութեր յուրացնելուց բացի նրանք ձեռք են բերում նաև շփման հմտություններ: Ուսուցիչն աշակերտներից չի պահանջում նման հմտություններ ունենալ. փոխարենը, նա նպաստում է դրանց զարգացմանը՝ կիրառելով համագործակցություն ապահովող տարատեսակ մեթոդներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ափոյան Ա. Է., 2014, *Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում*, Գիտական տեղեկագիր, (№ 1), էջ 336-345:

2. Դավթյան Ս. (2017) Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման իմ փորձից, *Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Երևան - Պրակ Ա, 2017,* էջ 300-304:
3. Խաչատրյան, Ս.Գ., (2006) Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, էջ 18:
4. Հովհաննիսյան Ա, (2006) Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես»:
5. Տեր-Գրիգորյան, Ա. Ե. (1980), Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, Լույս:
6. Spencer, K. (2006), Cooperative Learning. Denmark, Kagan Publishing: